

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացնելու առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-զրույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիք պատասխանների ձևաբուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարրերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ք X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:

- 1) հազոր-, հար-աշաղախ, կորնթար-, ար-մնի (դ)
- 2) առօր-ական, ելե-ջել, աշտ-ակիր, ոստր- (ե)
- 3) լոել-այն, ոլխտաղրու-ժ, հա-ելի, բար-ացակամ (յ)
- 4) գեղ-ուկ, գաղ-, հաղար-, զո-ալ (զ)

2 Ո՞ր շաբքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) բա-ադ, հե-են, մանրագ-ին, ու-ափառ
- 2) ֆի-ական, ին-ասուն, ք-ախույզ, այ-ենարան
- 3) ա-ահայր, ըն-իմակաց, տա-ալուծել, անդո-ագիր
- 4) ի-սունինը, եր-ենցաղ, երեսունե-որդ, վշտա-ուկ

3 Ո՞ր շաբքի բոլոր բաղադրյալ հասուկ անուններում է միայն մեկ բաղադրիչը գրվում մեծատառով:

- 1) ՔԱԶ ՆԱԶԱՐԻ ՀԵԶԻԱԹԸ, ՀՈՒՅՅԱՆ ՏՈՍԱՐ, ՄԵԾ ԵՂԵՌՆ
- 2) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՀԻՆ ՀՈՈՄ
- 3) ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԵՐ, ՄԵԾԱՄՈՒԻ ԱՏՈՍԱԿԱՅԱՆ, ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿԴԶԻ
- 4) ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ, ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱԶԻ ՇՔԱՆՇԱՆ, ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ԵՐԿՐՆԵՐ

4 Ո՞ր շաբքի բոլոր բառերում զաղտնավաճիկ կա:

- 1) նկարակալ, շրջագայություն, խոսակցական
- 2) հստակություն, կապտել, թռչուն
- 3) թվարկություն, գրաշար, ձեռնամարտ
- 4) հնարամիտ, զմրուխտյա, վնասազերծել

5 Ո՞ր շաբքի բոլոր բառերում *յա երկինչյունի հնչյունափոխություն* կա:

- 1) ատենակալ, հյուլեական, մեհենական
- 2) սյունակափոր, մատենազիր, հեծելազոր
- 3) պատենակիր, կենարար, կատարելագործել
- 4) միութենական, գործունեություն, այժմեական

6 Ո՞ր շաբքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **հացի կարոտ** - ապրուստի միջոցներից զուրկ, քոռ կոպեկ չտալ - նյութական նվազագույն օգնություն ցույց չտալ
- 2) **թկի տակ առնել-** նեցուկ կանգնել, սրտում կրակ վառել - ոգեշնչել
- 3) **ուղար պոչով կոլ տալ** - զոփող լինել, պղտոր ջրում ձուկ որսալ - խառնաշփոր վիճակից օգուտ քաղել
- 4) **հեքիաթներ պատմել** - ճիշտ չխսել, կոտր ընկնել - հակառակվել

7 Ο՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) մակնիշ, ջրմուղ, հավաքատեղ, որկրամոլ
- 2) կոճգամ, գրագետ, սնահավատ, ապշահար
- 3) բանսարկու, մարդատար, գովազդատու, բանասեր
- 4) թքագեղձ, սրախողիսող, անթացուպ, ակնբախ

8 Ο՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:

- 1) վարդաջուր, գետնանուշ, դառնաթախիծ, սևումութ
- 2) քարածուխ, որմնախորչ, ազգամիջյան, ազեվազ
- 3) դասալիք, դրոշակակիր, դնչակալ, տարեվերջ
- 4) շրջակա, մենասահը, կարեվեր, ջրագուավ

9 Ο՞ր տարրերակի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) սրտաբեկ-վշտահար, մույթ-ոտնաման
- 2) արգանակ-ապուխտ, շավիդ-արահետ
- 3) անկապտելի-ամբարտավան, երկչուտ-վեհերուտ
- 4) շեղ-կույտ, իմաստակ-տղետ

10 Ο՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց կազմությունը ճիշտ է տրված:

1. անկայուն - նախածանց+արմատ
2. ապերասան - նախածանց+արմատ
3. քղանցք - արմատ+արմատ+վերջածանց
4. դասացուցակ- արմատ+հոդակապ+արմատ
5. անարգանք - նախածանց+արմատ+վերջածանց

- 1) 1, 3, 4
- 2) 2, 4, 5
- 3) 1, 2, 4
- 4) 2, 3, 5

11 Ο՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ չկա:

- 1) Թորշումած վարդերի թերթիկները, մեկիկ-մեկիկ պոկվելով, ընկնում էին վար:
- 2) Նրա դիմաց՝ դրան փեղկերի արանքում, կանգնած էր տարօրինակ այցելուն՝ մի ձեռքում բոնած ձեռնափայտը, մյուտպ՝ ակնոցն ուղղելիս:
- 3) Մշուշը սողալով լեռներից կիրճն էր իջել՝ թափալզոր լցվելով ձորը:
- 4) Նա չդիպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին իր համար, միայն վերցրեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ զովացնելու սրտի տապը:

12 Ο՞ր նախադասության մեջ մակրայ կա:

- 1) Զրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը Ծով լուրյա՞մբ, Համբերությա՞մբ:
- 2) Ինձ կիհշեն, Երբ մտնեն անտառ, Լսեն հսկա կաղնիների Հեքիաքներն անբառ:
- 3) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր Ուղիների Ժապավեններն անհամար:
- 4) Սրընթաց պախրա՞մ, թե՞ զայլ գիշատիչ Ծեշտակի անցավ փարախսի մոտով:

13 Ո՞ր շաբթում են ճիշտ նշված բոլոր այն բայերի համարները, որոնք ներգործական սեռի են:

Ես 1. լոեցի: Հայացրս 2. փախցրի նրանից: Նա դեմքը 3. մոտեցրեց ինձ, 4. զտավ իմ աչքերը և 5. վախվորած նայեց ուղիղ աչքերիս մեջ: Ոչինչ 6. ասել պետք չէր. նա իսկույժ ամեն ինչ 7. հասկացավ: 8. Հառայեց և թաշկինակի ծայրով 9. սրբեց բարբիչներից կախված արցունքի վերջին կարիները և այլևս ոչինչ 10. չխոսեց:

- 1) 2, 3, 4, 6, 7, 9, 10
- 2) 2, 4, 5, 7, 9, 10
- 3) 1, 2, 3, 4, 8, 9
- 4) 1, 3, 4, 5, 7, 8

14 Ո՞ր շաբթի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1) թոշնաբույժ, սանր, կողաքն, միջնապատ
- 2) բնագիր, անվաղող, պահանջատեր, ուղեցույց
- 3) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, ջրատար
- 4) կցակար, սեպագիր, գորգեզր, սալաքար

15 Ո՞ր շաբթի բոլոր բառերի գործիքական հոլովը կարող է կազմվել *թ-ով*:

- 1) արյուն, կատաղություն, մաս
- 2) երդում, անկյուն, այուն
- 3) անուն, կատարում, խիզախություն
- 4) խափանում, նորություն, իրավունք

16 Ո՞ր տարբերակում դերբայական դարձված չկա:

- 1) Կամրջի վրայով անցնելիս աջուձախ չէր նայում:
- 2) Հարցուիփորձ անելով գտավ իր վաղեմի ընկերոջ տունը:
- 3) Անիրամեշտ էր մի քանի օրով գյուղ գնալ:
- 4) Մոտեցավ ու ջերմ բարևեց այգին մշակող այգեպանին:

17 Ո՞ր նախադասության մեջ միջակետ չի կարող դրվել:

- 1) Ծաղրածուի խոսքերը վաթառնամյա Լիր արքայի սրտում մտավախություն են ծնում մի՞թե կրտսեր դուստրն էլ է նման մյուսներին:
- 2) Ծառն ակնթարքորեն իր գիրկն առավ կույսին հասկացել էր որ աստվածուին է գորովանքով խոնարհելով թավշապատ ճյուղերը և դրանցով ծածկելով նրան:
- 3) Ուրիշ ելք չունենալով հրացանները տեղադրեց տարբեր տեղերում տարբեր դիրքերից էր կրակելու ցույց տալու համար թե դեռ դիմադիր ուժեր կան:
- 4) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:

18 Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:


- 1) Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:
Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:
- 2) *Sասներեք տարեկան էր Սիրելանջելոն, երբ դառնում է նկարչի աշակերտ:*
Նկարչի աշակերտ դառնալու ժամանակ Սիրելանջելոն տասներեք տարեկան էր:
- 3) *Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակմ իր կամքով ուսումնարան է մտել:*
Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան մտած զավակով:
- 4) *Ամենավտանգավորն այն սուսն է, որ քիչ է տարրերվում ճշմարտությունից:*
Ամենավտանգավորը սուսի՝ ճշմարտությունից քիչ տարրերվելն է:

19 Ո՞ր տարրերակում նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ չկա:

Ծառերի՝ միմյանց ներկյուսված սաղարքները, ստեղծելով մի ամրողական ծածկույթ, գիշերվա մթի մեջ նրանով անցնող ուղևորի համար անտառն ավելի սարսափագրութիւն է տալիս:

- 1) միմյանց -հանգման խնդիր, ուղևորի համար -նպատակի պարագա
- 2) նրանով-տեղի պարագա, ծածկույթ -ուղիղ խնդիր
- 3) սարսափագրութիւն -նընթակա
- 4) մթի -հատկացուցիչ, ներկյուսված -որոշիչ

20 Ո՞ր նախադասությանն է համապատասխանում տրված գծապատկերը:



- 1) Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, սկսեցի հետաքրքրվել աստղային երկնքով, և բոլորը միանգամից գլխի ընկան, որ ես մեծ մարդ եմ դառնալու, որովհետև գիշերները նայում էի լեռան զագարին, որի վրա ասես աստղեր էին թափվում:
- 2) Արքան խոսում էր դանդաղ, բառերը ձգում, որպեսզի իր խոսքերը, որոնց ճշմարտությանը ինքը չէր կասկածում, երկար հնչեին օդի մեջ՝ համոզությունը սաստկացնելու համար:
- 3) Հին կամքի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շալտում կամարի հիմքերին, թվում է՝ զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:
- 4) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծիսի մի այուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը րոպե առ րոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:

21 Ո՞ր տարրերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:

- 1) Թող հավերժ հիշվեն նրանց անունները, ովքեր գոհվեցին հանուն հայրենիքի:
- 2) Սեզ վաղուց էին պատմել նրա մասին, ով բազում քաջազործություններ էր կատարել և ազատել երկիրը թշնամիներից:
- 3) Մուշեղը մտավ նրանց արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում:
- 4) Այս գավաթը նրան է պատկանում, ով հաղթանակ կտանի սրամարտում:

22 Ո՞ր պնդումն է ճիշտ Հ. Մաքեոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:

- 1) Աղունը համաձայնում է ամուսնանալ Սիմոնի հետ այն բանից հետո, երբ իմանում է, որ իր հորաքույր Մանիշակի օյուղն է զնալու:
- 2) Ունեոր Իշխան հոր տնից Աղունը հարս էր եկել առանց օժիտի:
- 3) Սիմոնի ծնողները և հարազատները սկզբում մեծ խանդավառությամբ էին ընդունել Աղունին:
- 4) Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ:

23 Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

Ամենափրկիչ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, այծենակաճի վրա թեք էր ընկել Ուկանը:

- 1) այն մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
- 2) մի ժամանակ ծառայելով որպես ցորենի մառան
- 3) մի ժամանակ որպես ցորենի մառան ծառայած
- 4) որ մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան

24 Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:

- 1) Սոլոմոնի առակները
- 2) Ծննդոց գիրքը
- 3) Դավթի սաղմոսները
- 4) Ժողովոյի գիրքը

25 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Այս հիշատակարանն իմ ձեռքն ընկավ պատահական կերպով. թե ինչպես, հետաքրքրական չէ: Սա մի մեծ տեսոր էր, որի մեջ «կորած մարդը», ինչպես ինքն էր ենթավերնազրել իր հիշատակարանը, երկար տարիներ, համարյա թե օրը օրին զրի է անցրել իր անհատական կյանքի անցուղարձը»:

- 1) Ա. Բակունց. «Խոնարհ աղջիկը»
- 2) Ա. Իսահակյան. «Սաաղիի վերջին գարունը»
- 3) Ա. Շիրվանզադե. «Արտիստը»
- 4) Նար-Դոս. «Ես և նա»

26

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված է:

Թեև շատ էր ծերացել Սասդին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լուս աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լուրջունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին գրուց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ողին:

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) շրջադասություն
- 4) փոխաբերություն

27

Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խոլ աստծու դատաստանի:*

- 1) «Մի՞թե վերջին պոետն եմ ես» (Վ. Տերյան)
- 2) «Սեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Խսահակյան)
- 3) «Վահագն» (Ե. Չարենց)
- 4) «Հայոց լեռներում» (Հ. Թումանյան)

28

Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Հայ մեծանուն գիտնականը գրել է. «Դրանք կուտակված բազմաթիվ մեծ և փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով են երևում»:
 2. Հազար տարի հետո միայն՝ 17-րդ դարում, Գալիլեո Գալիլեյը, աստղադիտակն ուղղելով երկնքի դեպի այդ տիրույթը, հաստատեց Շիրակացու առաջ քաշած միտքը:
 3. 18-րդ դարից սկսվում է գալակտիկաների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությունը, և պարզվում է, որ Ծիր կաթինց բացի, որը մեր գալակտիկան է (Արեգակնային համակարգը գտնվում է նրա թևերից մեկում), գոյություն ունեն բազմաթիվ այլ գալակտիկաներ:
 4. Երկնային մարմիններով, համաստեղություններով, երկնակամարի վրա մշուշոտ թույլ լույսով երևացող շերտով, որ մարդիկ Ծիր կաթին կամ Հարդագողի ճանապարհ են անվանել, գիտնականները վաղուց են հետաքրքրվել, և դեռևս 7-րդ դարում Անանիա Շիրակացին վերջինիս մասին մի ուշագրավ եզրակացություն է արել:
- 1) 3, 4, 1, 2
 - 2) 4, 1, 2, 3
 - 3) 4, 1, 3, 2
 - 4) 3, 1, 2, 4

29 Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:

«Նշանուոքը Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ ... Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էին, զիշեր մը, ծառի մը տակ՝ աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհին ամենեն մեծահանդես նշանուոքը եղած էր իրենցը»:

- 1) «Զարուղոն»
- 2) «Փոստա́լ»
- 3) «Այրին»
- 4) «Այինկա»

30 Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:

- 1) Մոսկվա հետապնդում ու սպանում է Սարոյին:
- 2) Անուշը խելագարվում է և նետվելով Դեբեղի ալիքների մեջ՝ մահանում:
- 3) Աղբյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:
- 4) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:

31 Ո՞ր տողով է ավարտվում Մ. Մեծարենցի «Աքասիաներու շոքին տակ» բանաստեղծությունը:

- 1) Ի՞նչ հեշտին է մըքնշաղն այս սատափեն
- 2) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափեն
- 3) Նըվազն անոր կը հեծեծեն հեշտական
- 4) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափեն

32 Ա. Բակունիցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզզաց, ինչպես շիկացած խոփր դարրնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիշն էր: Ավին միմն վերջ էլ շիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը մերս չառավ»:

- 1) «Աբնաձոր»
- 2) «Ալպիական մանուշակ»
- 3) «Սիրիավ»
- 4) «Սալիսակ ճին»

33 Ո՞ր նախադասություններում զիջման պարագա կա:

1. Օդը, սակայն, այստեղ ցուրտ էր, գետինը՝ խոնավ, բուսականությունից գուրկ:
2. Ես, չնայած իմ անուղղելի լավատեսությանը, այստեղ զգում էի մի մեծ ու հորդաբուխ ուժի տագնապակի ազդեցությունը:
3. Եվ գուցե միայն սենյակում մի խով, Գլուխը թեքած պատկերիս վրա, Կնայի մի կին աչքերիս տխուր, Ու կարցունքոտվեն աչքերը նրա:
4. Քանի տարի էր, ինչ Թուրքանտա Քորոն և Փալանջի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ցանկության՝ զավակ չունեցան:
5. Քոյսրս դպրոցի լավագույն աշակերտուհին էր, իսկ ես, փոխանակ դասերս սովորելու, ժամանակս վատնում էի բակային խաղերի վրա:

34 Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:

1. միջնագիծ, 2. տարագրություն, 3. գրչատուփ, 4. տարեշրջան, 5. քախծախառն,
6. աներևութանալ, 7. դստրիկ, 8. հանդգնել

35 Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:

1. ծերծերել, 2. խանդավառվել, 3. պարուրել, 4. նազել, 5. պշրել, 6. խոնջանալ,
7. սեթերել, 8. խանդատել

36 Նախադասության անդամներից որո՞նց ձևարանական վերլուծությունն է սխալ:

Եթե զինվորների շողշողում զենքերը չլինեին, հեռվից դիտողին կրվար, բեք քարե դարի մարդիկ են հավաքվել սեղանի շուրջ:

1. **հավաքվել** - անորոշ դերբայ
2. **չլինեին** - անկանոն քայ
3. **շուրջ** - մակրայ
4. **կրվար** - չեզոք սեղի քայ
5. **դիտողին** - գոյական, որոշյալ առում
6. **մարդիկ** - ու հոլովման գոյական

37 Ո՞ր նախադասություններում ընդգծվածը շաղկապ չէ (նախադասությունները կետադրված չեն):

1. Աղջիկը **ող** նազերն այդպես փոել էր ուսերին ուշադիր նայում էր փողոցի անկյունում խմբված մարդկանց:
2. **Քանի դեռ** ճրագը վառվում էր երրորդ մարդը աչքերը լաթով կապած նստած էր սենյակում:
3. Ես ծնվել եմ երգի համար Ու **մինչև** մահ պիտի երգեն:
4. **Նախրան** պատանու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուժեստներ:
5. Ես պատմում եմ այն **ինչ** տեսելու ու զգացել եմ սեփական փորձով:

38 Ո՞ր բվերի տեղում ստորակետ պիտի դրվի:

Բայց Բուդդան որի վարդապետության սկիզբը փառավոր է(1) միջուկը իմաստուն(2) և ավարտը փրկարար(3) կարեկցանքով լցված դեպի ամրոխի անհավատությունն(4) նորից դիմեց նրան(5) թշվառության և տանջանքի այդ տօքետ ժառանգին: Նա բացեց ժողովրդի առաջ ճանապարհեցրը դեպի Նիրվանան դեպի նրա երանավետ անդրբը սակայն(6) ամրոխը ծաղրում էր նրան: Եվ նա կանգնելով Հիմալայն ի վեր(7) ասաց Ով Ազնի լսիր իմ աղորքը(8) և քոյլ մի տուր որ բագավորի անհավատությունը:

39 Տրված բառերից քանի՞սն են դերանուն:

այստեղ, ոչ ոք, բոլորը, որտեղ, այսօր, մեկմեկի, որոշ, համայն

40 Բառերից (կապակցություններից) քանիսի՞ քաղաքիչներն են գրվում անջատ:

խոսքի(մասային), կաս(կարմիր), տնից(տուն), զառ(ի)վայր, դափ(դատարկ), ըստ(ամենայնի), առ(հավետ), ուր(որ)է

41 Բառագույզերից քանի՞ն են կազմված հականիշներից:

ցայդ-գիշեր, ի վնաս-հօգուտ, հակամետ-միտումնավոր, ճիշտ-թյուր, սեղմ-ճապաղ, վտիտ-մարմնեղ, պարպում-լիցքավորում, հեղգ-ալարկոտ

42 Նախադասություններից քանիսո՞ւմ ընդգծվածը գոյականական անդամի լրացում չէ:

- Կանայք՝ խարտյաշ կամ սևաթ մազերով գեղեցկուիհիներ՝ պճնված ճոխ **արդուզարդով**, ճեմում էին:
- Մղձավանջային **անհերթիք** խարկա՞նք էր, թե՞ դժոխային իրականություն:
- Գազանների մոտ հացի կնստեմ, ողջույնը կառնեմ **բորենիներին**:
- Անկասկածենի** թիվը նշեցեք այն կանոնների, ինչից մենք հաճախ հասունացել ենք:
- Ես կգամ որպես մոռացված մի երգ՝ **Հյուսված** աղոթքից, սիրուց ու ծաղկից:

43 Նախադասություններից քանիսո՞ւմ անջատման խնդիր կա:

- Հեռացավ մեզանից տխուր, կարոտը սրտում:
- Նա բոռունցքով ջարդեց այն, ինչ մնացել էր խաղալիքից:
- Ընչաքաղցությունից իրեն՝ տասնութամյա շնաշխարհիկ օրիորդին, ամուսնացրին տարեց մարդու հետ:
- Չինացիները խոսում են իրարից խիստ տարբեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:
- Հին պատմության ուսուցչուիհին շատ գոհ էր այս աննշան թեմայի շուրջ արտասանված հարուստ ճառից:

44 Նախադասություններից քանի՞ն են արևատահայերենով:

- Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
- Եվ շա՞տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի քանակն իր:
- Են լեզվներում նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:
- Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հազիվ լսելի ոտնաձանով մը:

45 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է, Այսալ է, Չգիտես** տարբերակներից որևէ մեկը:

- Ներգործող խնդիր կարող են ունենալ միայն ներգործական սեռի բայերը:
- Պես** կապով կարող են կազմվել թե՛ ձևի, թե՛ ժամանակի պարագաներ:
- Պարագաները կարող են արտահայտվել միայն գոյականով կամ մակրայով:
- Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կառույցով:
- Սիւնույն բայը նույն նախադասության մեջ միաժամանակ կարող է ունենալ և խնդիր, և՝ պարագա լրացումներ:
- Պարագաները լինում են տեղի, ժամանակի, ձևի, միջոցի:

Բ մակարդակ

46 Համարակալված բառերում բաց բողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Զրտություն(1) գիշերներին լուսինը շող-(2) էր զցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա, պսպղում էին սերկ-իլի(3) տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խում(4): Լուսարացին հալվում էին աստղերը ձյան գնդերի պես, շա-ագունում(5) էր արևելքը, արևի առաջին շողերը փայլվիլում էին զուլալ, ականակի-(6) լճակներում, խաղում ամպերի հետ. ասես մի անտես ձեռք բ-բ(7) շողերով ամսի սպիտակ քուլաների վրա հազարավոր նա-շեր(8) էր նկարում, որ մի քիչ հետո ավերի նույն շողերով: Արևի շողերի հետ գոլո-շի(9) էր բարձրանում արտերից, ու գիշերվաս խոնավությունն էր ան-անում(10):

- 1) 1-ը, 2-ը, 6-ը, 10-է
- 2) 2-կ, 7-յու, 8-խ, 10-է
- 3) 1-ը, 5-ո, 8-դ, 9-ը
- 4) 3-ւ, 4-շ, 7-յու, 9-ը

47 Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:

- 1) խճանկար, դեռափթիթ, պարտիզան
- 2) մշտավառ, վերնախավ, հոգեթրթիոն
- 3) արյունուշտ, ալրադաց, համբուրել
- 4) նստակյաց, ծածկանուն, բնաբան

48 Ո՞ր շարքի բոլոր բառերում է ճայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի:

- 1) հոգյակ, ձվածեղ, վայրկենապար, չվացուցակ
- 2) լեզվանի, կղզերնակ, կատվածագ, թթվահամ
- 3) առվոյտ, ալյակ, ուրվական, մեղվապահ
- 4) պատանյակ, առվեզը, աղվամագ, կկվականչ

49 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) մարմազ-բուռն ձգտում, երախտիք-ուրիշին արած բարի գործ
- 2) քերծե-արագավազ որսկան շուն, տավիդ-լարավոր երաժշտական գործիք
- 3) ընձենի-մշտադալար ծառի տեսակ, տորմիդ-նավերի միավորում
- 4) կոսան-մետաղները հարթեցնելու մուրճ, վեղաք-հայ կրոնավորի գլխի ծածկույթ

50 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) աշակերտ, ակոս, ախորժակ
- 2) ավանդ, ամբար, անդուլ
- 3) աղանդ, ավազան, ավելուկ
- 4) ապար, ապստամբ, բազում

51 Ո՞ր շարքի բոլոր բառերն են բավ գրված բառի բառաձևեր:

- 1) երգել – երգած, երգելիս, երգում է, երգի՛ր
- 2) ինքը – իրենք, նրա, իր, իրենց
- 3) տուն – տան, տնային, տներ, տունը
- 4) հասնել – հասել, հասնող, հասավ, հասանելի

52 Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ չկա:

- 1) Սի ահարկու ծայն խոպոտ աղմուկով խլացրեց զանգերի դոդանջը:
- 2) Սի զարմանալի թախծոտ կյանք էր կանաչում դեմք:
- 3) Ես այն միակ ընթերցողն եմ, որ քո գործերին ծանոքանալիս խսկապես զգում է գոյության ողբերգականությունը:
- 4) Սիմոնը մեխսվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:

53 Տրված բառերից որի՝^o արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ քնն-նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) առաջնորդ
- 2) օրինակելի
- 3) հավանցիկ
- 4) մրցունակ

54 Ո՞ր նախադասության մեջ մեկից ավելի անկանոն բայ կա:

- 1) Ամսերը ճերմակ երամով անցան. իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
- 2) Հետո կուշտ կերած մեր ձիերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:
- 3) Քամին սարերից առաջին ձյունի Փոշին է բերում և շաղ է տալիս Բորիկ ոտներիս ու փշաքաղված մազերիս վրա:
- 4) Նա հագել էր կապույտ բաճկոն, դրել էր գլխարկ, որի տակ հավաքել էր շեկիկ մազերը:

55 Ո՞ր տարրերակում գերադրական աստիճանով դրված ածական չկա:

- 1) «Ընկողակ» բառն առաջին անգամ Եվլոպայում լսել են իսպանացիները ացտեկների հնագույն մայրաքաղաքը թալանելիս:
- 2) Շուրջն ամայություն էր. ամենակուլ փոթորիկը ավերակների էր վերածել յուրաքանչյուր շենք ու շինություն:
- 3) Գրասեղանի մոտ նատել էր հայ երիտասարդության մտքի ամենասիրելի դեկավարը՝ նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի քուր հայություն:
- 4) Պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված հոմերուսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են հունական շողողուն առասպելների տեսքով:

56 Ո՞ր տարրերակում բաղադրյալ ժամանակածն կա:

- 1) միտք արեց, երգչուիի պիտի դառնամ
- 2) մի՛ վիատվիր, չպետք է ներես
- 3) երես մի՛ տուր, տարավ-բերեց
- 4) պետք է գնամ, մոտ չեմ գա

57 Ո՞ր տարրերակում լղձական եղանակի բայածն կա:

- 1) Անունդ քող փարոս լինի ինձ Սուտ կյանքի և դառը մահու դեմ:
- 2) Շանքն է բեկվում ճակտիս վրա. Մահ, չգիտեմ, կա^o, թե^o չկա:
- 3) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աշքի առջև փշորել այս:
- 4) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խարվել:

58 Ο՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլվառության սխալ չկա:

- 1) Հանձինս քեզ՝ ես ունեմ մի լավ բարեկամ:
- 2) Արևո տաքացրել է քարը, ու ես ավելի եմ սեղմվում նրան, իսկ մրջյունները իմ վրայով տանում են իրենց քեռները:
- 3) Ձեր առաջարկների հետ դեռ չեմ հասցրել ծանոթանալ:
- 4) Նա իրեն համար հանգիստ կարդում էր, երբ հարեանը գրգռված ներս խուժեց ու սկսեց գոռգոռալ:

59 Ο՞ր բարդ նախադասության կազմում թերի նախադասություն չկա:

- 1) Բելը կանգնել էր զորքից բավական հեռու, իսկ Հայկը՝ առաջին շարքում:
- 2) Այդ օրերին կյանքն ընթանում էր միօրինակ, և ամեն ինչ ձանձրալի էր:
- 3) Մայրիկ, մի բան պիտի ասեմ, որը քեզ գուցե կուրախացնի:
- 4) Երեկոները, երբ մթնում էր, սովորաբար վառում էր բոլոր լույսերը:

60 Ο՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ժամանակի պարագա:

- 1) **Դանդաղ** իջնում էր երեկոն:
- 2) Իշխանն **այլևս** չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ զարդը:
- 3) **Հենց** վերջնական որոշում ընդունես, ինձ տեղյակ կպահես:
- 4) Հաջորդ տարի՝ **Վաղ գարնանը**, ծիծեռնակը վերադարձավ:

61 Ο՞ր նախադասության մեջ դերանունված արտահայտված ենթակա չկա:

- 1) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր թվում, թե սարերի ետևում ընկած զյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտի:
- 2) Կածանները նրանց անձանոր են ու երկյուղալի. չգիտես ինչ ձորեր են մտնում:
- 3) Դիլան դային գիտի, որ ինքը զառամյալ է արդեն, քայլելիս հենվում է փայտին:
- 4) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մանկության գյուղում:

62 Ο՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Նա փերին է զմրուխտ գետի, Ցնորքներիս սիրելին:
- 2) Ես մկրտվել եմ հայկական եկեղեցում, որի արմատները ծգվում են մինչև Թաղես և Բարդուղիմենու առաքյալները:
- 3) Օձը թույնը դուրս չի ցայտեցնում մինչև զոհի՝ մեկուկես-երկու մետր հեռավորության վրա գտնվելը:
- 4) Մեր՝ երեխաներիս աշքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլներին:

63 Ο՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի:

- 1) Բաթը զայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռթկալ ակնակապիճներից:
- 2) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:
- 3) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կիրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնի շալակով փայտ կրերի:
- 4) Նա զգում էր որ լավ կլիներ ինչ-որ բան իմանար այլապես ամեն ինչ զիխում խառնաշփորի էր վերածվել:

64

Ո՞ր նախադասության մեջ քայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալ կա (շեշտերը դրված չեն):

- 1) Երբ Գոզն դժգոհում էր մեր ազարակի ծառերից պտուղ քաղողներից, մայրս գորովանքով ասում էր.
- Ծող մի քիչ էլ քաղեն տանեն, ձայն չհանես. դրանով մեր պտուղը չի պակասի:
- 2) - Որտե՞ղ է երջանկության թագավորությունը, - հարցրեց արքան, - դուք ցույց տվեք ինձ, և այն իմը կլինի:
- 3) - Հայրիկիդ կասեմ, որ թույլ տա՝ թոռուցիկ թոցնես, - ասաց մայրս, - քայց այլևս թելը կտուրի ձողին չփառի կապես:
- 4) - Բարեկամներս, - ասաց նիստը վարողը, - խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և տղամարդու պես տեր կանգնել տրված հարցին:

65

Ո՞ր տարրերակի բոլոր բանաստեղծությունների հեղինակն է Վ. Տերյանը:

- 1) «Ուկեհանդերձ եկար», «Որպես Լաերտի որդին», «Իմ խաղաղ երեկոն է հիմա»
- 2) «Աշնան մեղեղի», «Կարուսել», «Սի մրահոն աղջիկ տեսա»
- 3) «Սի խառնեք մեզ ձեր վայրի...», «Տիրություն», «Անվերնագիր»
- 4) «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Fatum», «Տաղ անձնական»

66

Ո՞ր տողը Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից չէ:

- 1) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաճայն երգերը մեր...
- 2) Արևոտ մի սար եմ հիշում՝ ճակատին ձյունի պատառիկ...
- 3) Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա...
- 4) Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում...

67

Ո՞ր նախադասություններում փոխանվանաբար գործածված թվական կա:

1. Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:
2. Անիշեկի ժամանակներից սկսած՝ այդ գյուղում մշտապես ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանութը տղանարողիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
3. Ե՛վ Չարենցը, և Բակունցը հիացած էին Տերյանով. երկուսի համար էլ վերջինս կատարելասիա էր, բանաստեղծական արվեստի չափանիշ:
4. Իսկ երկրորդները նրանք են, ովքեր կոչված են կյանքի խորհուրդն օրիներգելու:
5. Երբ Ավետիքը դառնում է յոթ-ութ տարեկան, ծնողները նրան տալիս են սովորելու գյուղի ուսումնարանում:

68

Ո՞ր նախադասություններում համաձայնության սխալ կա:

1. Գործող բոլոր կուսակցությունները ներկայացնելու են իրենց քաղաքական ծրագրերը:
2. Միացյալ Նահանգները փորձում է խաղաղություն հաստատել Մերձավոր Արևելքում:
3. Այս ամենը վկայում են, որ վերահսկողությունը պատշաճ մակարդակի վրա չի եղել:
4. Ամրող ժողովուրդը պապանձված կանգնել էին՝ ասես խլացած Բուլղարի մահացու սպառնալիքների առաջ:
5. Հորս աչքերում կային հոգնությունը քողարկող ժայիտ և քնքշության ցոլքեր:

Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Հնավաճառից հինգ դոլարով գնված նկարը կարող է ամերիկացի նկարիչ Զերսոն Պոլլորի կտավը լինել. ահա այսպիսի ենթադրություն է արել արվեստաբան Պիտեր Բիրոն: Եթե ենթադրությունը ճիշտ է, ապա կտավը արժի 40-50 միլիոն դոլար:

Վիճելի նկարի տերը նախկին վարորդ, այժմ թոշակառու Թերրի Հորթոնն է, որի ավտոտնակում նկարը մնացել է մի քանի տարի: Մի օր, երբ այն նկատել է տեղի համալսարանի պրոֆեսոր Բիրոն և ճանաչելով Պոլլորի ոճը՝ ենթադրություն է արել, սկսվել է փորձաքննություն: Փորձագետները նկարի վրայի մատնահետքերը համարել են Պոլլորի արվեստանոցում եղած նկարներում առկա մատնահետքերի հետ, և ենթադրությունը առ այն, որ նախկին վարորդի մոտ գտնվող նկարը Պոլլորի վրձնին է պատկանում, հաստատվել է: Արդյունքում յոթանասունչորսամյա թոշակառուն փաստորեն հսկայական կարողության տեր է: Չէ՞ որ ամերիկյան հետպատերազմյան խոշորագույն նկարիչներից մեկն է համարվում Պոլլորը, որի հանրահայտ «Համար 5, 1948» կտավը, օրինակ, մասնավոր գործարքի արդյունքում վաճառվել է 140 միլիոն դոլարով. դա այն ժամանակներում գեղանկարչության մեջ վճարված գումարներից ամենախոշորներից է: Ավելի ուշ նկարչի մեկ այլ կտավ՝ «Համար 17Ա»-ն, վաճառվել է 200 միլիոն դոլարով:

Զերսոն Պոլլորը ամերիկյան արստրակտ էքսպրեսիոնիզմի ամենավառ ներկայացուցիչն է, հայտնի է ոչ միայն նկարների գաղափարական խորությամբ, այլև իր ստեղծած յուրահատուկ՝ ներկերը լցնելու և ցայտեցնելու տեխնիկայով: Բացի այդ, նա կտավը չէր ճգում ենթանկարակալի վրա, այլ գերադասում էր ամրացնել հատակին՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով նկարել չորս կողմից: Նա ասում էր, որ այդպես կարծես գտնվում է նկարի մեջ:

Նկարիչը անվանումներ չէր տալիս նկարներին, այլ սույն համարակալում էր դրանք՝ դիտողին իր նախանշած գաղափարներով չկաշկանդելու համար:

1. Համալսարանի պրոֆեսորը, նկարի վրա նկատելով հայտնի նկարչի մատնահետքերը, պարզել է, որ կտավը պատկանում է Զերսոն Պոլլորի վրձնին:
2. «Համար 5, 1948» հայտնի կտավը տարիներ շարունակ մնացել է մի նախկին վարորդի ավտոտնակում:
3. Թերրի Հորթոնին պատկանող նկարը իրականում շատ ավելին արժի հնավաճառին վճարված գումարից:
4. Կտավը հատակին ամրացնելու շնորհիվ Պոլլորը կարողանում էր նկարել կտավի բոլոր կողմերից:
5. Պոլլորի նկարների բարձր գինը կապված է ոչ թե դրանց բովանդակության, այլ ներկերը ցայտեցնելու միջոցով նկարելու տեխնիկայի հետ:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Միալ է, Զգիտես տարրերակներից որևէ մեկը:

1. **Երրեւէ, երրեկիցէ** բառերը ժամանակի մակրայներ են, **բազմիցս, կրկնակի** բառերը՝ չափի մակրայներ:
2. Մակրայր չի կարող լինել կազմությամբ պարզ բառ:
3. Գոյականի կրկնությամբ կազմված որոշ բառեր մակրայներ են:
4. **Առաջ, հեռու** բառերը կարող են հանդես գալ և որպես կապ, և՝ որպես մակրայ:
5. **Որեն, ովհեն** ածանցները կազմում են մակրայներ:
6. Մակրայները դառնում են ոչ միայն բայով, այլև ածականով արտահայտված անդամի լրացում: